



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 7
ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝
2023 Թ. ՄԱՅԻՄԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ
Օրակարգում՝

1. 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի ուսանողական սոցիալարցումների արդյունքների քննարկում:
2. Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ամփոփնային նախապաշտպանության արդյունքների քննարկում:
3. Խ. Արմվյանի անհետացման 175-ամյակի և Նար-Դոսի մահվան 90-ամյակի տարելիցների հետ կապված ՀՀ գրողների միության, Մատենադարանի, ԵՊՀ-ի, Գրականության ինստիտուտի, Արմվյանի տուն-թանգարանի և Վրաստանի Հանրապետության ազգային ժողովի գրադարանի տնօրինության նախաձեռնություններով 2023թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Երևանում և Թբիլիսիում գիտական նստաշրջաններ կազմակերպելու հետ կապված հարցերի քննարկում:
4. Ֆակուլտետի մագիստրոսական ուսուցումը երկու տարուց մեկ և կես տարի փոխադրելու հետ կապված հարցեր:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց 2022-2023 ուստարվա առաջին

կիսամյակի ուսանողական հարցման արդյունքները և գնահատականները: Պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի անդամների ուշադրությունն հրավիրեց հատկապես բարձր և ցածր արդյունքներ ունեցող դասախոսների տվյալների վրա: Տեղեկացվեց նաև, որ ֆակուլտետի ղեկանատի աշխատանքը գնահատվել է 4,61-ից 4,91:

Ամբիոնների վարիչներին հանձնարարվեց ամբիոնների նիստերում անվանապես քննարկել դիտողությունները, քննության առարկա դարձնել խնդրահարույց դեպքերը: Միևնույն ժամանակ առաջարկություն եղավ ավելի հստակ և ընդգրկուն դարձնել ուսանողներին ներկայացվող հարցաշարը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ամբիոնների վարիչները ներկայացրին ավարտական աշխատանքների և թեզերի նախապաշտպանությունների արդյունքները: Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոց. Ս. Գրիգորյանը իր խոսքում նշեց, որ նախապաշտպանությունը անցել է բնականոն, միայն մեկ ուսանող չի ներկայացել ավարտական աշխատանքի պաշտպանությունը, հետևաբար ամբիոնը չի երաշխավորել նրան: Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Բ. Գ. Պ., պրոֆ. Յու. Ավետիսյանը նույնպես նշեց, որ նախապաշտպանությունները անցել են համապատասխան ընթացակարգով՝ արձանագրելով, որ մեկ մագիստրոս և մեկ շրջանավարտ չեն ներկայացրել իրենց աշխատանքները, հետևաբար ամբիոնը նրանց չի երաշխավորել պաշտպանության: Ելույթ ունեցող մյուս ամբիոնների վարիչները նշեցին, որ չեն ունեցել խնդրահարույց դեպքեր:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Խ. Աբովյանի անհետացման 175-ամյակի և Նար-Ռոսի մահվան 90-ամյակի տարելիցների հետ կապված ՀՀ գրողների միության, Մատենադարանի, ԵՊՀ-ի, Գրականության ինստիտուտի, Աբովյանի տուն-թանգարանի և Վրաստանի Հանրապետության ազգային ժողովի գրադարանի տնօրինության նախաձեռնություններով 2023թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Երևանում և Թբիլիսիում նախատեսվում են գիտական նստաշրջաններ՝ կոչ անելով ակտիվորեն մասնակցել այդ նախաձեռնություններին:

Ելույթ ունեցողները ողջունեցին այդ նախաձեռնությունը՝ հույս հայտնելով, որ նախատեսվող գիտաժողովները արդյունավետ ընթացք կունենան:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը և ելույթ ունեցող ամբիոնների վարիչները գիտխորհրդի անդամներին տեղեկացրին, որ բոլոր ուսումնական ծրագրերը արդեն հաստատվել են, դրանք կազմվել և ներկայացվել են

Ժամանակին ու պահանջված ընթացակարգերով՝ հույս հայտնելով, որ կատարված փոփոխությունները դրականորեն կազդեն մագիստրոսական ուսուցման վրա:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի** մասնագիտացման, ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի փոփոխության հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Հ. Հովակիմյանի գիտական հետաքրքրությունները մեկ տարվա ընթացքում առավելապես դրսևորվեցին *գրականության տեսության* խնդիրների լուսաբանման ասպարեզում: Նա միջազգային հեղինակավոր շտեմարանում գիտական հոդված է տպագրել Վանո Սիրադեղյանի ստեղծագործության պատկերավորման առանձնահատկությունների և ոճական խնդիրների վերաբերյալ: Նրան հետաքրքրում են նաև 20-րդ դարավերջի հայ գրականության մեջ տեղի ունեցած ժանրային փոփոխությունները, մասնավորապես՝ պատմվածքի ձևափոխումը, այլ ժանրերի հետ միաձուլման և սերտաճման միտումները: Հ. Հովակիմյանը պատրաստել և տպագրության է հանձնել «Ժանրային իրացման որոշ հարցեր. Վանո Սիրադեղյանի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը» թեմայով հոդված, որը լույս կտեսնի առաջիկա ամիսներին: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվի առնելով ասպիրանտի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ անհրաժեշտ է դիտարկել Հ. Հովակիմյանի մասնագիտացման, գիտական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի փոփոխության հարցերը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի ներկա՝ Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությունը փոխել Ժ. 01.04- «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

2. Ատենախոսության հին թեման՝ «Պատմվածքի ժանրը 19-րդ դարի արևելահայ գրականության մեջ», փոխարինել նորով՝ «Պատմվածքի ժանրային ձևափոխումները 20-րդ դարի 70-80-ականների արևելահայ արձակույթում»:

3. Գիտական ղեկավար նշանակել նույն ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**